



### 39. ԿՅՈՒՄ ԳԸԼԽԻԿ

Կեր, չըկեր թագաւորըմ կեր ու կնիկ, երկուսն էլ խաւվուր կիլնին, լա՛ անգաւակ:

Թագաւոր շատ գըտնական մարտիրոս մոտ կերթա, շատ խեքիմքիրու կը խարցնը, ինչ կանը, չանը, ախըր թու անաջ չըկընտնը, օր անու գաւակ իլնը: Ինչ անու մըչալ կը կըտորը, կը գըտնա, ուր ան անու գաւակ չիլնը, օրըմ հիրիկվան տեղ կը կանչը ըզվուզիր կըսը. «Հալ-քեֆիաթ ընցնա յը, քանը վուր ծի գաւակ չիլնը, հասօր, ինչ հըմեն կը քնին, քաղաք կը խաւանա, իս, տաւ իլնինք, գիշիրով էրթանք, տաւեն վե կան կը գանք, մըհա տեղըմ, անաջըմ չը՞նք կընտընը, օր ծի տըղա իլնը»:

Վուզիր հանտան հինը կիլնը, հըմեն պան հազըր - հելըստա կանը, թագաւորին կը կանչը գիշիրով, ծիանք կը խեծնին, կը յան:

Շատ կը յան, քիչ կը յան, վար հաղբաւրի՛մ կը նըստին: Գանգան հանտե կը ճըհաթին, խաց կուտին, ճաւր կը խմին, կը տեսնան՝ ան կընարեն վե դաւրեշըմ կը գա: Կը գա, բարիվ կը տան, բարիվ կառնին:

Դաւրեշըն կըսը. - Թագաւոր ապրած կենաս, նա խըլիւսմախառ տաւ դո՞ւր տը յաս, քաւ տարտ, ցավ ի՞նչ ը:

Կըսը. - Տաւ ի՞նչ գինաս, օր իս թագաւոր իմ:

Կըսը. - Հա՛յ, հա՛յ, իս գըտիմ՝ տաւ թագաւոր իս, իս գըտիմ՝ տաւ վըրե՞ կը յաս տաւեն վե էլ:

Կըսը. - Իս վըրե՞ կը յամ տաւեն վե:

Դճվրեշ կըսը. - Խա՛, վուըլա՛, քու տա՛րտ էն ը, ուր քի տըղա չիլըն, տու, քու վուզիր կը յեք տուենն վե, վուր ճա՛րըմ անեք:

Կըսը. - Իս զատ գըտիմ, իս գըտիմ էլ թի ինչը քու տա՛րտին տա՛րման: Լա՛ իս քի շանց կը տամ մեկ կա՛վլով, տու ձի ահո՛ արա, վուր իմ կա՛վլ կը պախիս, իս քի քու մըրագին կը խասցիմ:

Թա՛գա՛վոր ահո՛ կանը, վուր դա՛վրեշ մընակ գինք ուր մըրագին խասցը, մեկէլ ինչ վուր մըրագ կանը, ինք անսուք տը կա՛տարը:

Դճվրեշն էլ թա՛գա՛վորին իրիք խնծոր կը տա, կըսը. - Տա՛ր, կես տու կի, կես տու քու կընկան, Աստըծո հրամանով ընչ ին ամիս, ին օր, ին սըհաթ թունումը, քի լա՛ծըմ տ՛իլըն: Զուր իրիք տարին ըմընա, քի իրիք տըղա տ՛իլըն, լա՛ ան պզտիկ լա՛ծ տու տաս ձիկ:

Թա՛գա՛վորն էլ անու խոսք կը տա, վուր Աստված ուր ըսածին լըսը, ինք ուր պզտիկ լա՛ծ տը տա դա՛վրեշին:

Դանտամ հինը դա՛վրեշ անուց հիրծիվեն կը կորսվը, անուք էլ ուրախ-ուրախ կը տա՛ման տուն: Տալ արիվ չըտաքցիր խորոտ, ինչ անուք խասան քաղաք: Մարտ խա՛բա՛ր չէր, թը թա՛գա՛վոր քաղքից իկիր տու: Մընակ անու սարը մարտիր խըլխուսն ինչ կիլնին վե, կերթան թա՛գա՛վորին աչք տը տան, կը խի՛ն՝ մարտ չըկա հանտ: Փըշու՛ն հըլվըլուց կիյնը թա՛գա՛վորը քոշկ ու սարը մեք, թա՛գա՛վոր հանտամ հինը կը խասնը քոշկ, կըսը. - Խա՛, իս, վուզիր գա՛ցեր ենք մե՛ծիր, իկինք:

Թա՛գա՛վոր կը կիսը ատ իրիք խնծոր, կես ինք կուտը, կես ուր կընիկ, չուր ին ամիս, ին օր, ին սըհաթ կը մնա, ի՛նչըխ դա՛վրեշ սեր էր, անու լա՛ծըմ էլա՛վ:

Էրկու տարը էլ կը մնա, համեն տարին թա՛գա՛վորին լա՛ծըմ կիլըն:

Թա՛գա՛վորը լա՛ծիր կը ճուճանան, հասակին կը խասնին, էլ չէ անու պզտիկ լա՛ծ օրե օր կը ճուճաներ, ան էլ էրկու տարվան մեք անցկուս ճուճացեր էր, օր յալա յանըթար:

Ատ պզտիկ լա՛ծ հըմեն օր կերթեր խա՛ ճըժիրուն ճանե կը խաղեր, ինչ ուր ճանիր կը տարվեր, չալափե՛մ կը զաներ անու, ինչ ուր ճանիր տարվեր էր, էլըմ կը խըլեր: Քաղաք սաղ թա՛գա՛վորից գա՛զընտ կաներ, կանըծեր թա՛գա՛վորին, ուր թամբի՛մ չըր անը վա՛ր ատ լա՛ծուն, համեն օր անուց ճըժիր կը տըլներ:

Ժամանակը մերա ընցավ, չուր օրըմ դավրեշ իրը: Ատ լա-  
ծու խեր, մեր գնազն ուրախացեր էր, ուր ալ դավրեշ չըր իգա  
ուրինց լածու հիտիվ, ընչ ըզդավրեշ տեսան, անունց լեղին կըտ-  
րավ հախու:

Դավրեշ էսաց. - Դորիս իմ լաճ տվեք, տանիմ:

Խեր, մեր խաբար արին մեկ, սիցին՝ մեր լաճու շուրիի  
խագցինք նախորոտը լաճ, նախորոտը լաճուն խագցինք մի լաճ,  
նախորոտը լաճ տանք, տանը:

Թագավորը լաճու խալալքի խագցին ըզնախորոտը լաճ,  
բիրին, թասլիմ ըզդավրեշ արին, սիցին՝ առ քու լաճ:

Դավրեշ էսաց. - Չէ, նարիկ իմ լաճ չը, մըկա կուզիմ ձենե իմ  
լաճ:

Թագավոր, ուր կնիկ սիցին. - Քու մուր քու գյըլոխ, իլը՝  
գյընա՝ մա ճըժիրուն, քու լաճ կընտը, տա՛ր:

Դավրեշն էլ էլավ, զընաց մա ճըժիրուն կան իրը, կան իրը,  
ուր լաճ կընտավ, տարավ:

Տարավ մա վերվերը սարի՛մ, հերի՛մ տառ կայնացցուց,  
ջախցը քարըմ կեր վար մըղարը տըռան, ջախցը քար էթալ տեն,  
ըզլաճ տարավ, մըտուց ատ մըղարեն վե:

Դավրեշ հըմեն օր կերթեր նեճիր, նեճիր կաներ, կը տաններ,  
թագավորը լաճն էլ կիրակուլ կեփեր, կը հագեր, չուր դավրեշ  
սարեն կը գեր:

Փելըմ ընցավ, ան հըմեն օր ինչ պարապ կը մըներ, կը մըտ-  
ներ հօդեք, կան կը գեր: Դավրեշ անու քառսունից մեկ պակաս  
բալնիս էր տվիր, սեր էր՝ ինչ պարապ կիլնիս, գյընա՝, ատ հօդեք  
քի խամար կան արը: Օրըմ ինչ կերթա, տեղըմ կը տեսնա, ման-  
գանեն օլորած, պառավըմ խանած հառիք:

Ատ պառավ էսաց. - Ա՛խ, խուզուտ, արիվուտ մեռնիմ, մըհա  
ծի ըստից փըրկը:

Կըսը. - Դավրեշ ինչ կը քընը, տառ անու մուրուս մաժմաժը,  
չուր ան կը քընը: Ընչ կը քընը, տառ մկրատով վուըշիկըմ անու  
մուրուսը միջի բալնիսը կըտորը: Լա խորոտ անցկում արա, օր ան  
չակախը, օր ան ակախը, ծի էլ տ՛ուտը, քի էլ: Ընչ բալնիս կը կըտ-  
որիս, ռըհաթ պառկը քու տեղ չուր խըլիսուն, ըզդավրեշ կերթա նե-  
ճիր, տառ շուտըմ բալնիս պի, մա մանգանեն քակը, ծի ըստից

անգատը, խընդրաց փախսինք, էրթանք, թի չէ, վուըլա՛, մի երկուսին  
էլ ալ անգատութիւն չըկա:

Թանգավորը լաճ կիւնը, կերթա տուն, կիրանկուլ կիփը, տուն  
պեկ կը բիրը, չուր հիրիկուն դավրեշ կը գա տուն:

Նանչ ընթրիս կուտին, կը պըրծնին, դավրեշ գըլուխ կը  
տընը վար ուր ծընկան, կը մաժմաժը: Ինչ դավրեշը կը քընը, վուը-  
շիկըմ անու մուրուս կը փըճըճը, չուր պզտիկ բալնիսըմ կը կըն-  
տընը, ինչ կը կընտընը, մկրատ վուըշիկմ կը թալը, անու բալնիս  
կը կըտըրը, ուսուլովմ անու գըլուխ կը տընը գետին, ինքըն էլ  
կիւնը, կը պառկը, լա անու կուք փըշուր չըտամը:

Կը մնա չուր խըլիսուն, դավրեշ կիւնը, կերթա նեճիր, լաճն էլ  
կը վազը մա պառաւ, մանգանեն կը թուլցըցը, ըզպառաւ կի-  
ճուը:

Պառաւ լաճուն կըսը. - Ա՛ռ խա քի հեսան, սանտըր, արծը-  
լին, աղ, խելը:

Դոր կառնը ըզլաճ, կը տամը, հողի՛մ տաւռ կը բանա, կը  
տեսնա հանտե ճուռմ ուսկը կը թալը, մեկ արծաթ:

Ան լաճուն կըսը. - Քու գըլուխ տո՛ւ հիրճիվ արծըթին:

Կը տա հիրճիվ արծըթին:

Դոր կըսը. - Տո՛ւ հիրճիվ ուսկուն:

Կը տա հիրճիվ ուսկուն, կիւնը ուսկըջրուկ, խուրջըմ ուսկը  
կը լըցին, կերթան: Հանեն մեկ ծի՛մ կը խեծնին, յալաքաքամ կը  
փախսին:

Չուր էվարման տոր կը փախսին, պառաւ կըսը. - Աստծո՛ւ  
սիրուն, մըհա իրի՛շկը, ան քյաֆիր չիրը՞: Մենք վից ոտնա էլ մոռ-  
ցիր ինք, ան քյաֆիր երկու տաղկիկը մեշ մի տը պըռնը:

Դառնանք վար դավրեշին:

Դավրեշ էվարին ընչ նեճրից կը տաննա տուն, կը տեսնա  
ջախցը քար վար մըղարը բերնին չը, հանտա՛մ հինը թըրըխկուցըմ  
կը տինը անու փուր:

Կըսը. - Վուըլա՛, նա հըմեն ան պառվու քարանձաթն ը:

Կերթա, կիրիշկը պառվու հողեն, կը տեսնա պառաւ հանդե  
չը, կերթա թավըլխանեն՝ երկու աղեկ ծիանք հանդե չին: Կերթա  
ան մեկէլ թավըլխանեն, կը տեսնա, ուր վից ոտնա էլ հանդե:

Դձվրեշ գազգան կուրախանա, կըսը. - Դան, պառա՛վ, տաւ քաւ խուգին տո՛ւր տը փըրթուցիս իմ ծեռնեմ: Դան, վից ոտնա՛, լուպըմ գանը տամ քի, չուր հի՞փ պառվուն տը խասցցիս:

Կըսը. - Էրկու օր:

Կըսը. - Դան, հան, քի ըսպանիցիր, էրկու լուպ գանը տամ քի, տաւ հի՞փ ըգի պառվուն տը խասցիս:

Կըսը. - Օրըմ:

Կըսը. - Դան, հան, քի ըսպանիցիր, կես ֆըտրա տամ, հի՞փ ըգի տը խասցիս պառվուն:

Կըսը. - Չուր ճաշուն:

Կըսը. - Դան, հան, քի ըսպանիցիր, ֆըտրե՛մ տամ, հի՞փ տը խասցիս պառվուն:

Կըսը. - Չուր ոտըմ տընիս ոըքեպ, տալ ան մեկէլ չըս խասցիր վան ան մեկէլ ոըքեպին, տը խասցըցիմ պառվուն:

Պառա՛վ լաճուն կըսը. - Մըհա իրի՛շկը՝ ան քյաֆիր ըզմի տը բըռնը:

Լաճ կիրիշկը, կըսը. - Գի գատըմ ինչըխ մըժիկ կը գա:

Կըսը. - Դեսան թա՛լ:

Լաճ նանչ հեսան կը թալը, սար, ծաւր սաղ կիլնը սուլաբ: Դձվրեշ մը ռանկին, վար ուր իշուն մեկ կընգը, մեկ կիլնը, ինք ուր էլ հըմեն կիլնին արընթըթախ:

Դձվրեշն էլ տեպրա-տեպրա, վուըշիկ-վուըշիկ անտ սուլաբից կանգատվը, կիլնը տաւս:

Պառա՛վ լաճուն կըսը. - Դան, տըղա՛, մեկ իրի՛շկը՝ մա ան քյաֆիրը ծեռնեն անգատում չըկա՞, մըհա չէրա՞:

Լաճ կիրիշկը, կըսը. - Գի գատըմ գատանանց ինչըխ մըժիկ կը գա:

Դձվրեշ ընչ սուլաբից կանգատվը, սերբանդութին կանը, մուխիր կը կընտնը, ուր էշ կը թավանձացը մա անտ մուխրին, իշու բըրինքտիր կը ժըրը, կիլնը մորեն մեկ, էլմէլ կը քըշը: Ինչ կարճ-խանսա կիլնը պառվուն, պառա՛վ կըսը՝ սանտըր թա՛լ: Ինչ սանտըր կը թալը, սար, ծաւր կիլնը մերը, դձվրեշ, ուր էշ կը ընգնին մա մերուն: Դա տա, հա տա՝ բոմ կանգանան մա թըփնից, բոմ անտունց կը փըրթընին, կընգընին մա մեկէլ թըփնիր: Դըմեն բըրին-տար կիլնին, ախըր տեսե, անտուց կանգատվին:

Ընչ կհլնին տաւս, էլմէլ հանդէ մուխիր կհլնը, էշ էլըմ կը թա-  
վալը մեչ, կը քապրը:

Դաւրեշն էլ էլըմ ուր վից ոտնա ծին կը խեծը, կը քըշը,  
կաւրճխասա կհլնը, պառաւ կըսը. - Մըհա իրիշկը, ան քյաֆիր մի  
չըխասա՞վ:

Լաճ կիրիշկը, կըսը. - Գի պա մ' ինչըխ կըրակ կը գա թախ  
մի:

Պառաւն էլ կըսը. - Արծըլին թա՛լ:

Նանչ արծըլին կը թալը, սար, ծաւր հըմեն կհլնը արծըլին  
բերան:

Դաւրեշ ուր էշ խեծիր, համա կը տա մա անտ արծըլաց-  
տիրուն: Իշու ոտքիր, քանտակ, դաւրեշը ուտքիր, հըմեն կհլնին  
արուն, արընթըթախ: Դե ըստա, դե անդե, վուըլա՛, ախըր դաւրեշ  
թը անդեկ, թը ավիր, անտուց էլ կազանովը: Ընչ կհլնը տաւս, կըս-  
կըծու ալ չըռըհաթը էլ, համա անցկում արընճապաղ հանով էլմէլ  
կը քըշը:

Պառաւ կըսը. - Մըհա իրիշկը, վուըլա՛, մի տը բըռնը ան  
անխուզին:

Լաճ կիրիշկը, կըսը. - Վուըլա՛, գի գատըմ ինչըխ գյուլլա կը  
գա:

Պառաւ կըսը. - Դե շուտ, աղ թա՛լ:

Նանչ աղ կը թալը, սար, ծաւր կհլնը աղ:

Դաւրեշ, ուր էշ անտ արընթըթախ հանով կը տան մա անտ  
աղին: Դաւրեշը ոտքիր կը կըսկըտան, դաւրեշ առուծը պես կը  
բռռա՝ թու-չալ-մըչալ չըկա: Ախըր վուըշիկըմ վուըշիկ հանդուց  
կհլնին տաւս:

Դաւրեշ կաւրճխասա կհլնը պառավուն, լաճուն կըսը. - Ալ  
տա՞ւր խուզին տ'անգանտը:

Պառաւն էլ լաճուն կըսը. - Խելին թա՛լ:

Լաճ խելին կը թալը, սար, ծաւր կհլնը ծով:

Պառաւ, դաւրեշը լաճ կը մնան ծովով տեն: Դաւրեշ կը  
մնա ծովով դես: Դաւրեշն էլ կը տա մա անտ ծովուն անուց հի-  
տիվ: Բըռըմ տիր դաւրեշ կհլնը, կը սըկվը, տիր մ'էլ կերթա, հա  
կերթա, չուր մըկա էլ կերթա, տալ չըխասիր ծովու տակ:

Նուր պառավ, ատ լաճ պոլըմ վար մեմեկը կը խընտանան, կը նըստին, կը ռըհաթին, դոր կիլնին, ուր հըմեն մեկ էրթա խա ուր ճամխին:

Պառավ ծիիր էրկուսըն էլ կը տա ատ լաճուն, խուրջին ուսկին էլ, պառավ կը գորը վար ատ լաճուն կըսը. - Ուզիս, չուզիս, նա ուսկիքըն էլ տ'առնիս քի, ծի ագանտիցիր, իս պառավ իմ, ի՞նչ տ'անիմ փարա, ծի չախըրկի՛մ գին տո՛ւ, բաս ը:

Լաճ կըսը. - Ատ խուրջի ա՛ռ քի:

Ախըր ի՛նչըխ կանը, չըկանա վար ատ պառվուն: Ան էլ լուպըմ ուսկը կը տա պառվուն: Խազար տիր մեկ մեկէլը խալալ կանին, հաճեն մեկ կերթա խա ուր քեֆին:

Պառավ կը յա խա ուր հալին, ատ լաճըն էլ շատ կերթա, քիչ կերթա, կերթա, մա վերվերը սարին կիլնը տաւս:

Հանդե անու խովիվըմ ռաստ կը գա, կըսը. - Հա՛յ, խովի՛վ, ոխչարըմ խասա՞վ ծի, քանը՞ կուրուշ:

Կըսը. - Վուըլա՛, գա չէ, կես ուսկը:

Կը խանը, ուսկի՛մ կը տա գան, խովիվ կերթա, ոխչարըմ կը բիրը, քանլիմ կանը:

Ան էլ կը մուրթը, միս, կաշին հըմեն կը տա խովըվոշ:

Կըսը. - Ատ միս, կաշին կը տանիս տուն, թը քու աղեն կը խարցընը, կըսը՝ ի՞նչ իլիր ատ ոխչըրին, կըսիս՝ գըլիւրվալ, խատավ, իս էլ մուրթիցը, միս, կաշին առը, բիրը:

Խովիվ ուսկին կառնը, ուրախութենե շաշ կիլնը, կըսը. - Հա՛յ ջան, միս, կաշին էլ իտու ծի, իս տը տանիմ իմ աղին շանք տամ, սիմ՝ վուըլա, գըլիւրվալ, իս էլ վիզ կըտորցը, բիրը:

Խովիվ կը մնա հանտե, քազավորը լաճ գազամ կը գանտնանա, գատ կյում խորոտըմ կը տարտկը, կը կուրծը ուր գըլիւխ:

Պառավ ընչ անու գըլիւխ տվեր էր հիրճիվ ուսկուն, արծըթին, անու նըմուշ էրեգանկան պես կը բըրըղկըտեր, ան էլ կանտմե ատ կյում կը կուրծը ուր գըլիւխ, խարցնողին կըսը. - Խա՛, վուըլա՛, իս չաչալ իմ:

Մուղտարըմ կերթա, կերթա քաղաքըմ կիլնը տաւս, հիրիկու կիլնը, հըմեն մարտ կիլնը, կը թըղնը ուր տուքան, ուր բանըկործ, կերթա տուն: Վով կը խասնը, կըսը. «Մըկա դանկախքիր տը գանի, տաւ վըրե՞ քի խամար տեղըմ չըս կընտընը»:

Ան էլ շատ կան կը գա, տաւր կը յա, չըկանա ուր տեղըմ  
կընտընը, կը յա, սարի՛մ մոտ կը կայնը, ան սարեն թագաւորին  
կիւնը, թագաւորը մշակտիր ընչ չաչալեն կը տեսնան, կիմանան  
ուր կարիք ը, կըսին. - Դա՛, Զաչալի՛կ, գընա՛, քի տե՛ղըմ կընտը,  
քանը խալկ հըմեն չըքընած, տաւ մնաս տաւս:

Զաչալիկ կըսը. - Ապա իս մարտ չըմ ճանչընա, ծի տեղըմ  
տվեք չուր խըլիսուն, խըլիսուն կիւնիմ, կերթամ խա՛ իմ հալին:

Թագաւորը սայիս կըսը. - Ա՛րը մա՛ ծի չուր խըլիսուն:

Ուր միտ վե կըսը. - Տանիմ խա՛ ծի, ծիանքտիրու տեղ կապլը  
չուր խըլիսուն, բա՛ս ը:

Սայիս ըզԶաչալիկ կը բիրը մա՛ ինք, չուր խըլիսուն կը  
տեսնա Զաչալիկ քանի՞ մ՛աշխատողը, խըլիսուն Զաչալկեն  
կըսը. - Խա՛, վուըլա՛, կա՛ց մա ծիկ, մի խանար կաշխատինք, իմ  
թային իս էլ, տաւ էլ խընդրաց կուտինք:

Կյում գըլխիկն էլ կըսը. - Իմ ուզածն էլ էտ ը:

Փելըմ կը մընա անտը, չուր գանրուն կը բացվը:

Բոստընչին Զաչալկեն կը ճանչըներ մըհա՛ ան ինչ աշխա-  
տող տըղա էր, ան էլ Զաչալկեն էսաց. - Արը էրթանք մա՛ ծի, իս,  
տաւ իմ ջըրեն խընդրաց կուտինք, իս չըխտմ խալվուրցիր իմ, ալ  
չըմ կանա իմ ջըրեն հըմեն ուտը:

Կյում գըլխիկն էլ գընաց մա՛ ծիապան, էսաց. - Զի տաստուր  
տը տաս, իս յամ խա բոստընչուն:

Ան էլ կըսը. - Աստված խա՛ քի իւնը, դորիս իս կանամ ծիանք  
շախիմ չուր աշուն, աշուն տաւ քաւ պան կը պըրծնիս, խընդրաց  
ըզծիիր տը շախինք:

Կյում գըլխիկն էլ գընաց խա՛ բոստընչուն, կաշխատեր:

Փելըմ մնաց, բոստընչին էսաց. - Որդը՛, իս խալվուրցիր իմ,  
ալ չըմ կանա քընը մա՛ բոստան, տաւ կաց մոտ, իս յամ տուն, փը-  
շու՛մ ռըհաթիմ չուր խըլիսուն:

Ժանանակըմ բոստընչին կերթեր տուն, Զաչալիկ կը մներ  
մա՛ բոստան: Մնաց օրըմ, գիշիր ժանանակ. ինչ հըմեն քըներ են,  
Կյում գըլխիկ ուր ջըզտընեն իրիք մազ էխան. մեկ սիվ էր, մեկ  
կարմիր, մեկ բոզ: Ատ իրիք մազիր պառաւն էր տվիր, սեր էր՝  
հանկախ ուր տաւ ուզիս ուր մազ տաս կըրակ, ան գունով ծին տը  
գա, քաւ հիրծիվ կայնը:

Չաչալիկ հանկախ հիմը կյոււմ ուր գյըլխուց էթալ դեն, անու նըմուշ ինչըխ երեգանկ բըրըղկըտաց, սիվ մազ հիտու կըրակ հանկախ հիմը, սիվ ծին՝ սիվ զընով, սիվ հանվսըրով, սիվ խանվաքիր, սիվ ճակիր կապուկ վերա իրը, ուր հիրճիվ կայնամալ: Կյոււմ գըլխկէ մը ռանկին, ըզծին խեծամ, անուն Աստօնւն արամ, գյընաց ան գյըլխի, իրը ան գյըլխի, մեկ տիր ընչ ծին էգար, թոզ, տոււան իտու վար բոստընին: Խանան իլնը, տու սիս, չըխո ըստն մորե գատ չըցանած:

Շուտ ատ ծիու մոտեն մազըմ քեշից, լըղար բերնեն էխան, իթուխ, գյընաց, ինքըն էլ ուր կյոււմ իտը ուր գյըլխի: Գյընաց, մըտամ ջախսը ճըրտուն վե:

Չըսի՞ս՝ Կյոււմ գըլխիկ ընչ ուր կյոււմ ուր գյըլխուց խանիրը, անու իրիսը շանավիլք գանցիր, դիպիր թագավորը պատիկ ախչըկան հողը պատ, ան էլ հաշար իլիր, իկիր հանեք, գան տիսիր, ատ պանիր հըմեն թանաշա արիր, ուր սերտ վար Չաչալկեն ավիր: Թագավորը ախչիկ թըղնինք ատ հալը մեք, տանմանք վար բոստընչուն:

Խըլխոււն շուտ բոստընչին ընչ կը գա բոստան, կը տեսնա՝ ալ անու կանաճութին չըկա մա բոստընին: Ուր միտ վե Զիսուս Քրիստոս կանը, կըսը. «Նա պախեզին ի՞նչ էլամ, հիրիկուն հըմեն կանաճ էր, խըլխոււն ընցընա իլիր»:

Կը կանչը, կըսը. - Տա Չաչալիկ, Չաչալիկ, Չաչալիկ:

Վուըշիկըմ կըսը. - Խա՛, ան ի՞նչ ը:

Կըսը. - Տա Աստված քու տուն ավոր, մա տու հո՞ւրն իս:

Չաչալիկ կըսը. - Տա մարտըմ, ծիավորըմ չըկա՞ հանտե:

Բոստընչին կըսը. - Չէ՛, չէ՛, արը մըհա ինչ իլիր ը:

Չաչալիկ կը գա հանտե, կըսը. - Վուըլա՛, հալ-հավալ ընցնա յը. իս քըմեր էր, ինչ կես գիշիր կուտրամ, անախա, ինչ տեսնամ՝ մա պախեզին շանավիլքըմ կա, իս էլ էլա, իրիշկիցը, սիցը՝ մըհա ի՞նչ ը, իս էլ տեսա սիվ ծիավորըմ հանա ծի կարճխանա իլիր, իս էլ շուտըմ փախա, մըտա ջախսը ճըրտուն վե: Ան ծիավոր իրը, էրկու, իրիք տիր գյընաց ան գյըլխի, իրը, խանան, գատ չիթուխ, ինչըխ տու քու պարը աչքով կըխիս: Իսըն էլ հախու մնացեր էր ճըրտուն վե չուր մըկա, ինչ տու իկիր:

Բոստընչին էլ կըսը. - Որդը՛, պան չըկա, փուրծանքըմ իրը վար մի, ընցամ, զընաց, իլը՛, էլմէլ ընկնինք խա մի պանին:

Էլմէլ ուրիմց բոստան կը դնին, չուր էրկու, իրիք շաբաթ մ'էլ կիւնը քանց հանաք տիրն էլ խորոտ:

Շաբաթըմ էլ վերա կը ընցնը, թագաւորը պզտիկ ախշիկ կըսը. - Բոստընչը, վաղ տաւ ծի խիար մը՝ բիրը, տու, թըխ Չա-ջալիկ բիրը, տաւ խաւվուր իս, խեղճ իս:

Ան էլ կըսը. - Աղեկ ը:

Կը մնա, ան մեկէլ օր Չաջալիկ խիար կառնը, կը տանը թագաւորը ախշկան:

Թագաւորը ախշիկ անու կըսը. - Դայիմ տաւ խիար, պան պի ծի, մը՝ թըղնը՝ ան պիրը:

Լուպըմ ուսկը կը տա անու, կը ճամխը:

Օրըմ էլմէլ ընչ կես գիշիր կը ընցնը, Չաջալիկ էլմէլ ուր կյում կը գանը գետին, կարմիր ծիու մագ կը տա կըրակ: Կարմիր ծին կը գա՝ կարմիրը գընով, կարմիր ռըքեպով, կարմիր հաւսըրով, կարմիր խաւաւքիրով, կարմիր ճակ-սիւնխով:

Կիւնը, կը խեծնը, Աստըծու անուն կը տա, էրկու տիր կը գա ան գըլիխ, խաւաւ Խընը, մարտ կըսեր՝ չըխոմ տաս տարվան խիրկ ը, ան մեկէլ տըրուսն տալ մըգեղըմ, պան մընացեր էր մա խիրկին, աս տիրն ան էլ չըկեր:

Չաջալիկ շուտըմ ուր կյում իտը ուր գըլիխ, ծիու գամ գըլ-խուց առից վե, կապից վերա, մոտեն մագըմ քեշից, իտը ուր ջըգտան, էլըմ ըգծին իթուխ, գընանց: Ինքըն էլ գընանց, քըռե՛մ բըլուց վար ուր չուր խըլխուսն:

Խըլխուսն շուտ, բոստընչին ընչ տը գեր, բոստընին աչք տը տեր, ի՞նչ կը խը՝ ավար-խավար պերած վար բոստընին:

Կը գա, մա բոստընին կան կը գա, կըսը. - Չաջալիկ, Չա-ջալիկ:

Չաջալիկ չըկա, մարտ չըկա, էլմէլ կը պոռա. - Չաջալիկ, Չաջալիկ, Չաջալիկ:

Չաջալիկըն էլ վուըշիկ խիծուցըմ կը խանը, կըսը. - Դա՛, ան ի՞նչ ը:

Բոստընչին կըսը. - Տըղա՛, հա՛յ, Աստված քաւ տուն չավըր, ան հո՞ւրն իս:

Կըսը. - Խա՛, վուըլա՛, գա քըռը տակն իմ:

Նուր բոստընչին քարիր կը թաւը, ըգկյում գըլխիկ կը խանը տաւս:

Կըսը. - Տա նա վո՞վ ընցնա արավ խա քի, խա նա բոստընին:

Կըսը. - Խա՛, վուըլա՛, իս քըռը մոտ թա՛վալեր էր, մեկն էլ ալախաճա, կարմիր ծիավորըմ՝ կարմիր խա՛լա՛վքիրով, կարմիր ծա՛կ-սիլախով, մտավ մա բոստընին, իս էլա՛ վեր, տը փախեր, մեկ տիր ուր ծին քըշից մա պախեզին, ընչ քըշից, աճու քամուց քըռեն բըլավ վա՛ր ծի: Ան պըրհիշակ իպը վա՛ր մի բոստընին, աճ մեկէլ տիր տալ քըռե՛մ սաղ մընացեր էր, աճ տիր աճ էլ հըմեն խըռ-տըպըլակ արիր:

Կըսը. - Պա՛ն չըկա, որդը՛, թըվաղկ վա՛ր մարտու կը գա: Էլմէլ կը տնինք, տալ տարին շուտ ը:

Չաչալիկ, ուր խեր էլըմ բոստա՛ն կը տընին, հաճաճվաճ պես կիլնը, կը կատող:

Այա՛մ էլ վերեն կը ընցնը, Կյու՛մ գըլխիկ էլըմ ընչ կես գիշիր կը կուտորը, ուր կյու՛մ գըլխիկց կը խանը, կը թալը, աճ շաճա՛վիլք կը գաճը թաճա՛վորը սարեն: Թաճա՛վորը պգտիկ ախչիկ չըխո՛մ գըտեր՝ մըհա հիփ Կյու՛մ գըլխիկ տիլնը, աճ խաղ խաղա, հաճ-տա՛մ հինը կաճախեր, կէլներ թաճա՛շա:

Չաչալիկե մը ռանկին, բոգ ծիու մազ կը տա կըրակ հաճտա՛մ հինը բոգ ծիավորըմ՝ բոգ ռըքեպով, բոգ խա՛լա՛վքիրով, բոգ ծա՛կ սիլախով՝ կապուկ վերա, կը գա, ուր հիրծիվ կը կայնը: Ան էլ աճու՛ն Աստծու՛ն կանը, ծին կը տաքցը հինը, մեկ տիր գանկու՛ն կը գաճընը, ընչ կը գաճընը, խա՛րա՛մ իլնը, ալ թու մարտ գինա, թի հաճո՛ք մորե բոստա՛ն իլիր, ալ տեղն էլ քըՖշ չանը:

Չաչալիկըն էլ ուր կյու՛մ կը տընը ուր գըլխիկ, բոգ ծիու մոտեն մազըմ կը քեշը, կը տընը ուր ջըգտա՛ն վե, կերթա երկու, իրիք արտա՛պո գատըն, կը մըտընը մա խոտիրու՛ն, կը պաղկվը:

Խըլխու՛ն ընչ բոստընչին կը գա, շաշ կիլնը, կըսը. - Աղեկ, չուր հիրիկու՛ն էլ ի՛մ խա՛լ ըստա՛ բոստա՛ն էր, աճա՛ն բոստա՛ն խըրիշտակտիր տարա՛ն, ի՞նչ էլավ:

Կիյնը, տես, տեն կան կը գա, հա՛ կը կանչը Չաչալիկեն, Չաչալիկ ծեն չի տա: Շատ կան կը գա, կը պոռա, կը ճըվա, կըսը՝ դո՞ւր իս, Չաչալիկ: Նուր Չաչալիկ վուըշիկ տըքուցըմ կը խանը:

Կըսը. - Ըստա՛ ի՛մ, բոգ ծիավորըմ չըկա՞ հա՛տե:

Կըսը. - Չէ՛, չէ՛, մարտ չըկա, իլը՛ արը:

Նուր Չաչալիկ կիլնը, կը գա:

Կըսը. - Խա՛, վուըլա, հալ-քեֆիաթ ընցնա յը. իս ծի խաճար քընեթ էր, մեկըն էլ բոզ ծիավորըմ իրը, տը մըտմեթ բոստան: Չուր իս հայիըյուն, ան մըտավ բոստան: Տալ չըր մըտիր, անու քամին ծի էթալ, իպը ըստա: Իս անցկում անքեպնեը բան չըր տիսիր: Մըկա ան քանի՛մ կըտրիճ ը, ուր անու բըհեմ ծի ընցկընեմ էթալ. չըմ գինա՛ ան Սըփ Սարգիսն էր, յան Սըփ Գևորքն էր, վո՞վն էր:

Անունը էլմէ կընգնին խա ուրինց պախեզ շինիլուն, մենք տաննանք վար թագավորը պգտիկ ախչկան:

Մենք չըխտ տեսանք՝ քանը տիրըմ Կյում գըլխիկ գյեր տիւս, թագավորը պգտիկ ախչիկ կէլներ փանջարեմ, թամաշա կաներ:

Ան անցկում սավտալու էլեր էր վար Չաչալկեմ, ուր ալ չըր կանա տայամիշ տա, ատու խաճար էլ օրըմ էլավ, գընաց մա ուր քուրիր, էսաց. - Քուրիր՛, տիւ գիտե՛ք ատաթը. ընչ ախչիկ ճաւճանա, կը տան իրկան, մըկա մենք էլ ճաւճացիր ինք, մի հասակին խասիր ինք, մի խոր սինք՝ մի էլ տա իրկան:

Քուրիր սիցին. - Խա՛, վուըլա՛, ի՞նչըխ անինք, ի՞նչըխ չանինք:

Էսաց. - Առնինք իրիք բաշլա, մի տանկըտիր գանինք հինը, հորողկինք մի խոր դիվան, չըխտ անունը տը խասկանան՝ մըհա մի ուզիլուն ի՞նչ ը:

Էլան, իրիք բաշլա առին՝ ճուչ քուրուչ՝ խասուն-խասուն, միջնիկին՝ կես խասուն, կես ժոռ, պգտըկին՝ կանաճ, ուրինց տանկըտիր գանիցին հինը, հորողկիցին ուրինց խոր դիվան:

Ընչ ատ բաշլեք տարան թագավորը դիվան, սիցին՝ նաւունը քու ախչըկտիր հորողկած ին, ան շաշ էլավ, չըգիցավ՝ յանե ինչ, նուր անու վուզիր էսաց. - Թագավո՛ր ապրած կենաս, քու ախչըկտիր կուզին կարգվին:

Թագավորն էլ տալալ իտու կանչիլ, էսաց. - Քաղաք քաղքով գան, իմ սարը տակ վե ընցնին:

Ուր ախչըկտիրուն էլ մեկ մեկ խնձոր իտու, էսաց. - Վի կուգեք, գանեցեք վար անու գըլխուն:

Քաղաք քաղքով էկին, թագավորը սարը տակեմ մեյ մեկ ընցան: Գուչ ախչիկ ուր խնձոր էգար վար վուզըր լաճու գըլխուն: Միջնիկ ախչիկ՝ վար մալխո լաճու գըլխուն, մընաց պգտիկ ախչիկ:

Հըմեն իկին, գացին, թագաւորը ախչիկ ուր խնծոր վար թու մարտու գըլխուն չէգար:

Թագաւոր էսաց. - Ալ քաղաք մարտ կա՞:

Սիցին. - Թագաւոր ապրած կենաս, ալ մարտ չըկա, մնաց Չաչալիկ, ուր խեր:

Անունցն էլ կանչիցին, Չաչալկե խեր ընցավ, ընչ Չաչալիկն էլ տը ընցներ, ուր խնծոր էգար վար անու գըլխուն:

Չաչալիկ ծեռ իտը վար գըլխուն, բոռաց. - Ա՛խ, իմ գըլխիս, ա՛խ, իմ գըլխիս:

Անու քուրիր, անու խեր, մեր հըմեն գան արին ծաղըր, սիցին. - Սիվո՛վ սիվավորվիս, ալ մարտ չըկե՞ր, տա՛ւ քա խնծոր գանիցիր վար Չաչալկե գըլխուն:

Թագաւորն էլ ուր թագա փեսացտիրուն համեն մեկին սարե մ'իտու, ուր պզտիկ ախչկան էլ խարամ տու մ'իտու. դե գըլնա մա քաւ լուսաթըթախ իրիկ: Ախչիկն էլ նալաջացավ, էլա՛վ, խատ ուր իրկան գըլնաց, մըտավ ատ տուն:

Փելըմ մընաց, վուզըր, մալխո լաճիր, ուրինց կընկտիր հորողկիցին մա թագաւոր, համեն մեկ խորոտ ծի մ'ուզիցին, գացին խարսնասերան ծիանքուխս թըղնելու:

Կյուն գըլխիկն էլ ուր կընկան էսաց. - Իլը՛, գըլնա՛ մա քա խեր, թըխ ծի՛մ տա ծի, իսն էլ էրթամ խարսնասերան:

Ախչիկն էլ գնաց մա խեր, խեր էսաց. - Ձի թու ծի չըկա՛ իս տամ Չաչալկեն:

Ան էլ մալուլ-մալուլ գըլնաց մա ուր մեր, մերն էլ գընաց մա թագաւոր, էսաց. - Ախըր ան էլ մի ախչիկն ը, ծի մ'էլ տու անու իրկան, թըխ ան էլ էրթա ծիանքուխս:

Շատ զորից, թագաւորն էլ նալաջացավ, էսաց. - Սեցե՛ք սայիսին, թըխ ծըրտուտ բերգիրըմ տա անու:

Չաչալիկ էլավ, ծըրտուտ բերգիր հիտիվ-հիրճիվ խեծավ, ժանգռուտ թուրըմ կապից ուր մեջք, գըլնաց:

Ճամխը վերա ճըժիր կը թափեն վար անու, կըտեն հիրճիվ քարը: Ընչ գագան կերթա, կը գատնանա, խալը կիլըր, աքուցըմ կը տա, կը գանը, ըգբերգիր կը գըլուրը ծուրըմ վե, սիվ ծիու մագ կը տա կրակ, սիվ ծին կը գա՛ սիվ ոըքեպով, սիվ խալաւքիրով, սիվ ճակ-սիլախ կապուկ վերա: Ուր կյուն գըլխուց կը խանը, կը

տընը քննի՜մ տակ, ուր ծին կը խեծնը, ուր թուր կը կապը վնար ուր, անուն Աստծուն կանը, կը յա ծիանքթուխսը մեյտան:

Թնագավորը փեսեք, ընչ ծիանք կը թըղնին՝ երկու օրվա ճամխից գնտըն, Չաչալիկ դար կանը, կը գն գնունը կը ընցնը, էլըմ կը տաննա, սիլե՛մ կը զանը վուգըր լաճուն, մեկ մալխո լաճուն, կը յա: Կը յա, կը խասնը մանչ ծուրուն, սիվ ծիու գնմ բերնեն կը խանը, մազըմ մոտեն կը քեշը, կը տընը ուր ջըզտան, կը թըղնը ծին, կը յա: Էլմէլ կը խեծնը ուր բերգիր, ուր կյուն կը տընը ուր գըլիխ, ուր ժանգառոտ թուր կը կապը վնար ուր, կը գն տուն:

Դնանանք վնար թնագավորը փեսացտիրուն:

Ընչ անտ ծիավոր հանեն մեկին սիլե՛մ կը զանը, թնագավորը ճուլ ախչըկտիր կըսին. - Հա՛յ, քու ծեռքի՛ր կուտոր:

Պզտիկ ախչիկ կըսը. - Չէ՛, վուլլա՛, ծի իրկըտիրու ծեռքի՛ր կուտոր:

Կըսին ճուլ ախչըկտիր. - Սիվո՛վ սիվավոր, տալ չանչընա:

Չաչալիկ անու թամպը արեր էր, օր մարտու չըսեր, օր ինք չաչալ չը, լն անտ ախչիկ չըր կանա ըզինք զավթը:

Փեսեք ինչ կը տաննան տուն, թնագավոր կըսը. - Հանդթուրին վի՞ մնաց:

Փեսեք կըսին. - Թնագավոր՝ ապրած կենաս, սիվ ծիավորըմ իրը, չընք գիտնա Սըփ Սարգիսն էր, վո՞վ էր, մի հանեն մե կը սիլե մ՛էգար, գըլնաց:

Փելըմ մնաց, Չաչալիկ ուր կընկան էսաց. - Քու խոր անեծքըմ տը տամ, սա՛՛ ամեն:

Էսաց. - Ամեն:

Ան էլ էսաց. - Աստըծուց խընտրիր իմ՝ չուր վաղ արիվ իլնը, քանծ աստըղ երկինք անքար գն, քու խոր սարը բուլուր բըռնին:

Մընաց ան մեկէլ օր խըլխուն, ընչ Աստված ուր պարը լուս թնփացցուց վնար հավթե տիվ մըլաթին, քանծ աստըղ երկինք՝ անքար իկին, թնագավորը սարը չուրս բուլուր բըռնիցին:

Հալ-քեֆիաթ թնագավորին պատմիցին, թնագավոր էսաց. - Ապա վո՞վ տը յա խա անունը կըվը:

Սիցին. Թնագավոր ապրած կենաս, վո՞վ տը յա քու փեսեք հավիլ:

Ան էլ տանտուր իտու ուր փեսացտիրուն, էսաց. - Մըկա կուզիմ ծենե՛ չուր ճաշուն մեկ անքար չըթըղնեք:

Համեն մեկին բռնըմ- բաւուկ անքան թասլիմն արավ,  
հորողկից կռիվ:

Կյում գըլխիկն ուր կնիկ հորողկից մա ուր խեր, ծի մ'ուզից,  
ուր ինքըն էլ էրթեր կռիվ:

Թագավորն էլ ան գեթին ուր գըլխուց խանիլու խամար  
եսաց. - Ան բերգիր, ան ժանգռուտ թուր տվիր իմ անու, ալ հու-  
րուշ գախ չըբիրը, թասլիմ անը:

Չաչալիկն էլ էլմէլ հիտիվ-հիրճիվ խեծավ, գընաց, գագան  
գընաց, ընչ խալանցավ, էլմէլ ուր կյում էգար գետին, կարմիր ծիու  
մագ խոու կրակ: Կարմիր ծին իրը՝ կարմիր ռըքեպով, կարմիր  
սիլախքիրով, կարմիր խալանքիրով, հըմեն կապուկ վերա, հա-  
գըր-հեղըստա: Մեկ տիր անուն Աստծուն արավ, քըշից գընաց,  
կռվու մեյտան կայնավ:

Կեսօր կուտրեր էր, թագավորը անքան հըմեն թալաֆ էլեր  
էր, թագավորը փեսեք անցկում նեղ ընկեր են, ուր ալ չի գա սիլ:

Խանան իլնը Կյում գըլխիկ՝ էրկու տիր գընաց ան գըլխիս,  
իրը ան գըլխիս, ալ շնչավոր չիթուղ:

Գացին, թագավորին սիցին. - Թագավոր՝ ապրած կենաս,  
կարմիր ծիավորըմ իրը, մեկ տիր դար արավ, ինչ անքան կեր սա-  
րը բուլուր, մեկ տիր ճարթից, խանան իլնը, թը շնչավոր իթուղ:

Ընչ կռիվ վերջացավ, թագավոր կանչից ուր փեսեք, տարավ  
պատիվ, մընակ ըզՉաչալիկ չըկանչից:

Ժամանակըմ մընաց, թագավոր ցըռացավ կպավ: Ինչ տեղ,  
ինչ ալաջ արին, փարե՛մ չարավ: Թագավոր չըժրավ:

Մընաց թագավոր, քանը խելքով մարտըմ կեր մա ան քաղ-  
քին, կանչիլ խոու, իպը, էսաց. - Մըհա տեղըմ չըն կանա անը:

Շատ տեղիր շանք տվին, հերկեն-պարակ պանիր սիցին,  
ան էլ բոշ բանանտն ընցավ:

Դոր ան մարտիր սիցին. - Թագավոր՝ ապրած կենաս, անպա  
գըտի՞ս՝ առուծը կաթ ուտիս, տու տը ժրիս:

Սիցին. - Ապա վո՞վ տը յա առուծը կաթե, վո՞վ չըյա:

Սիցին. - Թագավորը փեսեք տը յան:

Անունքն էլ էլան, ուրինց ճակիր կապիցին, ուրինց ծիանք  
խեծան, էլան, գացին:

Շատ գացին, քիչ գացին, գացին խասան մա սարի՛մ, ալ  
անծեղ, ալ կռիկ, ալ թու պա՛մ չըթըղին, օր չըսպանիցին:

Կյում գըլխիկն էլ ուր բերգիր խեծավ, ուր ժանգռուտ թուր կապից վար ուր, գըննաց: Գըննաց, խասավ խալը տեղըմ, բոզ ծիու մազ իտու կըրակ, ծին իրը՝ բոզ ռըքեպով, բոզ խալավ-քիրով, բոզ ճակ-սիլախ կապուկ վերա, հազըրուկ- հելըստա: Ան էլ շուտըմ կյում էզար գետին, ուր բերգիր, ուր ժանգռուտ թուր ի թալ հադե:

Մազըմ էլ իտու կըրակ, ան պառավ, ընչ ըզինք ազատեր էր, իրը հանդե, էսաց. - Խուզո՛ւտ, արիվո՛ւտ կուրքան իլնիմ, քու ուզիլուն ի՞նչ ը, ո՛ւզը:

Էսաց. - Խա՛, վուըլա՛, մի թագավոր ցըռացավ կըպիր, կըսին՝ տեղ առուծը կաթը, մըկա իս չըմ գըտը, տուրո՞ւց տը բիրիմ:

Պառավն էլ կըսը. - Գըննա՛ ֆըլան տեղ, ֆըլան լըճը պըռուկ փո՛ւսըմ փուրը, տաւ, քու ծին մտնե՛ք մեջ, կըրճոն, պան տըվե՛ք վար ծի, մընացե՛ք հանդե. չուր արիվ առնը: Առուծ տը գա, հանտե ծաւր տը խըմը, ան հըրճըն տիր մարտախուտ տ՛աննը, տը տառ-նա, լա էլըմ տը գա վար ճըրուկն, ծաւր տը խըմը: Ինչ տը խըմը, տաւ քու նիտանեղ զար անու ճապ ոտ, ան ոտ ուռուկ ը, ընչ տաւ զանիս, ան փըշու՛մ տը բոռբոռա, դոր անու ոտ տը ռըհաթը, տըսը. - Տաւ վո՛վն իս, քու Աստված սիրիս, իլնիս տաւս, քու ուզիլուն ի՞նչ ը, իս տը տամ:

Չաչալիկ ըզպառավ կը հորոդկը խա ուր պանին, ինքըն էլ կերթա, ուր պառվու ըսածտիր անը:

Կերթա մա՛ սարի՛մ, կը տեսնա՛՝ վուզըր լաճ, մալխո լաճ գի հանդե անծեղ, կռիկ կը սպանին:

Կըսը. - Պարեկանքի՛ր, ան ի՞նչ կանեք:

Կըսին. - Խա՛, վուըլա՛, մի թագավոր ցըռացավ կըպիր, մենք էլ իկիր ինք, առուծը տըկով առուծը կաթ տանինք, ուր ժըրը:

Ան էլ կը թըղնը, կերթա պառվու սած լըճը բերան, ուր խա-մար տեղըմ կը փուրը, ինք, ուր ծին կը մտնին հինը, կըրճոն կը տան վար ուրինց, նիտանեղ կը հազըր, չուր արիվ առնիլու գախ առուծ կը գա:

Հանաճ մարտախուտ կառնը, կը տառնա, էլմէլ կը գա վար ճըրուկն, ծաւր կը խմը, ուր փըշու՛մ կը խըմը, լաճ նիտանեղ կը զանը, կը տեպնա անու բըրընին:

Առուծ ձեռնը կը խամը, յալա յա մատաթ, կըսը. - Ա՛խ, մա վո՞վն էր: Մըկա ընկներ իմ ձեռ, իս գան տ'աներ կըտուր-կըտուր:

Փըշու՛մ կը մնա, արոււն, գըռեխ կը յա առուծը ոտնեն, կը ռըհաթը, կըսը. - Շուճի՛կ-ջըռնիկ, տաւ տաւս իլը, քաւ մըրագ ի՞նչ ը, արա՛, ահդ իլնը, իս քաւ ուզածն անիմ:

Ան էլ հանտան հիմը կիլնը տաւս, կըսը. - Խա՛, վուըլա՛, մի թագավոր ցըռացավ կըպիր, սած անու տեղ՝ առուծը տըկով առուծը կաթը, մըկա իս էլ իկիր իմ առուծը կաթե:

Առուծն էլ կըսը. - Հա՛, քաւ սովորըցողը բերան կուտըր, վուըլա՛, իս ահդ արիր իմ, իմ ահդ չըմ իտա գետին:

Ուր երկու ծագտիրուց մեկըն կը տա անու, կըսը. - Ա՛ռ, տա՛ր, յոթ սար ընցցո՛ւ, մո՛ւրթը: Անցկում իլնը՝ անու ձեռ չըխաս-նը իմ ականչ, վուր խասավ, քի կանիմ կըտուր-կըտուր, մեկըն էլ սարսուփըմ լվա, նուր պի, անցկում իլնը, ուր խուտ չըգա մոտեն: Ուր խուտ գա, տաւ իմ ձեռնեն չըս պըրծնը:

Չաչալիկըն էլ կէթա, կը մուրթը, խորոտըմ կը լվա, կը պի-րը, առուծ կը կըթը, կամըն, կը գա: Ընչ կը գա, կը տեսնա՝ տալ թագավորը փեսեք կռիկ, պան կը սպանին:

Կըսը. - Պարեկանքի՛ր, բաւ ը ատ հայվընքտիր ըսպանեք, էկեք, ձի առուծը կաթ տամ:

Կը վագիւն, կը գան մատ ան:

Կըսը. - Ապա տաւ ի՞նչ տը տեք ձի, օր ձի առուծը կաթ տամ:

Կըսին. - Ինչ օր կուզիս:

Ան էլ կըսը. - Իս ձի մոտեն պա՛մ չըմ ուզը, մընակ թըղներ՝ դաղըմ դընիմ վա՛ր ձի ճըռան:

Անուընքըն էլ կըսեն. - Ի՞նչ տ'իլնը, պա՛մ չըկա, մարտ չըկա ըստա:

Ուրից խալավքիր կը խանին, մատընկով դաղըմ կը տընը վա՛ր անու ճըռան, մեկ վա՛ր անուր:

Ան էլ առուծը ծագու լեղին չոկ պախեր էր, իտու անոււնց, էսաց. - Տալ չըկ տվիր՝ տը ժըրը:

Անուընք էլ շուտ լագիցին, գացին մա թագավոր, սիցին. - Թագավո՛ր ապրած կենաս, քաւ տեղ պիրիր ինք:

Ինչ տեղ տըվին թագավորին, թագավոր մեկ տըրե բատլավ: Անցկում էլավ, ուր ալ չըր կանա մուխրուցը ծակուց իլնը վե:

Մնաց եվարին, Կյում գըլխիկ կանգնիլը առուծը կաթ իտու կնիկ, տարավ թագավորին էսաց. - Առ' քի առուծը կաթ:

Ինչըխ արավ, չարավ, չէլավ, էսաց. - Սաղիր պիրին, մըհա ինչ արին, դոր Չաչալիկ:

Ախչկան մեր շատ գորից վար թագավորին, էսաց. - Համա ժանր ը, լա ուր կը գորին, տաւ խըմը:

Թագավոր ընչ մեկ կանգնիլ խըմավ, գագամ աղեկցավ, էսաց. - Աստըծո՛ւ սիրուն, փըշու մ'էլ հանդուց բերեք ծի, ի՞նչ ը ծի ուզիլուն, իս կը տամ:

Գացին, Կյում գըլխիկին կանչիցին, Կյում գըլխիկ առից տիկ կաթ, իրը մա թագավորը տաւնին, էսաց. - Թագավոր ապրած կե- նաս, իս չըխո նա հըմեն քի խամար իմ բիրիր, լա իս ալ քի կաթ չըմ իտա, չուր տաւ իմ մեկ խընտիրք անիս, կանտարիս:

Հանկախ հինը վուզը լաճ, մալխո լաճ հախու փետանցան:

Թագավոր էսաց. - Քու խընտիրք ի՞նչ ը, տեհ, շո՛ւտ արա:

Ան էլ էսաց. - Իմ խընտիրք պան չը, մընակ տաւ տաւ շինիս, ուր ըստից մարտ չիլը տաւ, բալնիս տաս ծի, իս իմ սիլուն սիմ, բաս ը:

Հանկախ հինը տաւ շինիցին, բալնիս տըվին ըգԿյում գըլխիկ:

Կյում գըլխիկ թագավորին էսաց. - Թագավոր ապրած կե- նաս, խարսնաներանին ան վո՞վն էր՝ ծիանքթուխս թըղնիլու գախ սիլե մ'եզար քու ճուչ փեսին, մեկ միջնիկին:

Թագավոր էսաց. - Ան վո՞վ էր:

Կյում գըլխիկ հանդամ հինը ուր կյում գըլխուց եզար վե, եզար գետին, էլավ ջըհեղըմ՝ վուր չուտիս, չըխըմիս, հինը իրիշ- կիս, ընչ անու իրիսի շանավիլք եզար ատ քիշկը-սարը պատիր, հըմեն մայիլ էլան, մընացին:

Էսաց. - Թագավոր ապրած կենաս, ան իսն էր:

Էլմէլ խարցնից թագավորին, էսաց. - Ան վո՞վն էր՝ կռվու գախ ան հըմեն ասքար թալաֆ արավ:

Թագավոր էսաց. - Վո՞վ գինա՝ Սըփ Գևորքն էր, վո՞վն էր:

Էսաց. - Ան էլ իսն էր:

Էլմէլ էսաց. - Թագավոր ապրած կենաս, մըհա քու փետանց- տիրու խալավ բաց, մըհա վո՞վն ը վար անուսց ճըռնիրուն մըշան տըրիր, դանիր:

Բացին տեսան, ուր անդուրդ՝ երկուսը ճղռան վերեն էլ դանկա:

Էսաց. - Ան էլ իսն իմ արիր:

Նուր թագավոր էսաց. - Ամա՛ն, Աստղծո՛ւ սիրուն, տաւ քանծ ծի ճուլ, իս քանծ քի պզտիկ:

Ջան կը նըստըցցեր վար ուր թախթին, լա ան էսաց. - Քու թախթ քի պիրոզ բըմբարաք իլնը, ծի քու թախթ պետք չը:

Նուր թագավոր ուր թագավորութնը կեսըն իտու անու, յոթ օր, յոթ գիշիր թաժա խարսնիս արին, անունք խասան ուրինց մըրագին, տաւք էլ՝ ծիր:

